ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 108

«25» 11 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 5 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2012 թվականի մարտի 2-ի N 5 հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 63-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«63. Արական սեռի դատախազները աշխատանքի վայրում կամ պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս՝ համազգեստ չկրելու դեպքում, կրում են դասական (գործնական) ոճի կոստյում, վերնաշապիկ և կոշիկ, աշխատանքի վայր են ներկայանում գործնական, կոկիկ և ոչ արտահայտիչ սանրվածքով:

Իգական սեռի դատախազները աշխատանքի վայրում կամ պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս՝ համազգեստ չկրելու դեպքում, կրում են դասական (գործնական) ոճի հագուստ (ցանկալի է կոստյում) և կոշիկ, աշխատանքի վայր են ներկայանում գործնական, կոկիկ և ոչ արտահայտիչ դիմահարդարմամբ և սանրվածքով:

Հագնվածքի դասական (գործնական) ոճից ողջամիտ բացառությունները թույլատրելի են բացառապես ոչ աշխատանքային օրերին աշխատանքի վայրում գտնվելու դեպքում:»:

2. Հավելվածը լրացնել նոր՝ 63.1-ին և 63.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ

«63.1. Դասական (գործնական) ոճին չեն համապատասխանում մարզական, «ջինսե» հագուստը, արական սեռի դատախազների դեպքում՝ ոչ կոկիկ և չխնամված մորուքը, իգական սեռի դատախազների դեպքում՝ երեկոյան, տոնական, փայլուն, կարճ, հավակնոտ, արտահայտիչ, լայն բացվածքով զգեստը, երեկոյան, տոնական, փայլուն և չափազանց բաց կոշիկը, ոչ կոկիկ, արտահայտիչ կամ երեկոյան դիմահարդարումը, մատնահարդարումը և սանրվածքը, ոչ պատշաճ, երեկոյան, տոնական, փայլուն, արտահայտիչ զարդերը:

Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված կանոնները տարածվում են նաև սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված աշխատողների վրա, ովքեր աշխատանքի վայրում կամ պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս պետք է ունենան խնամված, կոկիկ և գործնական տեսք:

63.2. Սույն հավելվածի 63-րդ և 63.1-ին կետերով սահմանված պահանջների խախտում հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատախազի կամ սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված աշխատողի անմիջական ղեկավարը պարտավոր է տվյալ անձի ուշադրությունը հրավիրել հայտնաբերված խախտման վրա՝ առաջարկելով անհապաղ կամ հնարավոր ամենասեղմ ժամկետում վերացնել սույն հավելվածի 63-րդ և 63.1-ին կետերով սահմանված պահանջներին անհամապատասխանությունը:»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4.Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5.Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ